ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՎԻԶԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2012թ. դեկտեմբերի 17-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագիրը /Այսուհետ՝ Համաձայնագիր/, որն ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ին: Համաձայնագրի հավելվածում ընդգրկված՝ Իսլանդիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի և Լիխտեյնշտեյնի վերաբերյալ համատեղ հայտարարության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական Միությունը ի գիտություն են ընդունում Միության և Նորվեգիայի միջեւ առկա սերտ հարաբերությունները, մասնավորապես Նորվեգիայի միանալը Շենգենյան կանոնագրքի իրականացմանը, կիրառմանը և զարգացմանը, և նպատակահարմար են գտնում, որ Նորվեգիայի ու Հայաստանի իշխանությունները առանց ուշացման կնքեն կարճաժամկետ վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր՝ Միության և Հայաստանի միջև Համաձայնագրի նմանատիպ պայմաններով:

ՀՀ կառավարությունը 2012թ. հոկտեմբերի 4-ի թիվ 1255-Ն որոշմամբ Նորվեգիայի Թագավորության քաղաքացիների համար 2013թ. հունվարի 10-ից սահմանել է առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետով, այն է՝ 180 օր ժամկետով մեկ տարվա ընթացքում:

Նորվեգիայի Թագավորության կառավարության կողմից ի պատասխան ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Նորվեգիայի Թագավորության կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրի նախագիծը, որը հնարավորություն կտա ՀՀ քաղաքացիներին Նորվեգիայի Թագավորություն այցելության համար մուտքի վիզա ձեռք բերել ՀՀ և ԵՄ միջև Համաձայնագրով սահմանված նմանատիպ պայմաններով:

Ելնելով վերը նշվածից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Նորվեգիայի Թագավորության կառավարության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագրի ստորագրումը: